ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք.Երևան, Գ. Նժդեհի 23, հեռ. +(37410) 44-71-21/224/
Ե-ԴԴ-9-46785

«03» դեկտեմբերի 2020թ.

Թիվ ՎԴ/1961/05/20 վարչական գործով
պատասխանող՝ Բյուրեղավանի քաղաքապետարանին
Հասցեն՝ ք. Բյուրեղավան, Վ.Ա. Վեհափառի 1

Ձեզ է ուղարկվում ՀՀ վարչական դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 03-ի՝ «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏՄ N 9-38/21
«12» 01 2021 թ.

Առդիր՝ 1 թերթ:

Դատավոր Ռ. Խանդանյանի գործավար Տ. Բարսեղյան

Վարչական գործ թիվ ՎԴ/1961/05/20

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

03.12.2020թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)՝ նախագահությամբ դատավոր Ռ. Խանդանյանի, քննության առնելով թիվ ՎԴ/1961/05/20 վարչական գործն ըստ հայցի Անի Դիլաքյանի ընդդեմ Բյուրեղավանի քաղաքապետարանի՝ 14.10.2019 թվականի «Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին» թիվ 59-Ա որոշումը՝ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 27.82 քմ ընդհանուր մակերեսով 32 բնակարանը (Վկայական թիվ 15072014-07-0048, տրված 2014 թվականի հուլիսի 15-ին) աճուրդային (դասական) կարգով օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը համաձայնություն տալու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

Դատարանի վարույթում է գտնվում վարչական գործն ըստ հայցի Անի Դիլաքյանի ընդդեմ Բյուրեղավանի քաղաքապետարանի՝ 14.10.2019 թվականի «Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին» թիվ 59-Ա որոշումը՝ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 27.82 քմ ընդհանուր մակերեսով 32 բնակարանը (Վկայական թիվ 15072014-07-0048, տրված 2014 թվականի հուլիսի 15-ին) աճուրդային (դասական) կարգով օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը համաձայնություն տալու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցվորի ներկայացուցիչ Վահե Սեդրակյանը դատարան մուտքագրված միջնորդությամբ խնդրել է կասեցնել սույն գործի վարույթը, քանզի դատարանում քննվում է մեկ այլ վարչական գործ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով որոշում, վճիռ կամ դատավճիռ կայացնելը:

Նկատի ունենալով, որ այլ վարչական գործի շրջանակներում հայցվորը վիճարկում է «Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին» թիվ 59-Ա որոշումը՝ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 27.82 քմ ընդհանուր

մակերեսով 32 բնակարանը (Վկայական թիվ 15072014-07-0048, տրված 2014 թվականի հուլիսի 15-ին) աճուրդային (դասական) կարգով օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը համաձայնություն տալու մասով, իսկ թիվ ՎԴ/4918/05/20 վարչական գործի շրջանակներում հայցվորը ներկայացրել է հայց ընդդեմ Բյուրեղավանի քաղաքապետարանի՝ խնդրելով ՀՀ Կոտայքի մարզ, Բյուրեղավան 2-րդ փողոց, 49 շենք, թիվ 32 բնակարանը Անի Դիլաքյանին անհատույց օտարելու մասին բարենպաստ վարչական ակտ կայացնելուն պարտավորեցնել՝ դատարանի համոզմամբ տվյալ գործի արդյունքն էական նշանակություն կարող է ունենալ սույն գործի համար, ուստի դատարանը անհնարին է համարում սույն գործի քննությունը՝ մինչև թիվ ՎԴ/4918/05/20 վարչական գործով վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը, քանի որ դրանով հաստատված հանգամանքները կարող են էական ազդեցություն ունենալ սույն գործի լուծման համար:

Ամբողջ վերը շարադրվածի հիման վրա դատարանը գտնում է, որ թիվ ՎԴ/1961/05/20 վարչական գործի վարույթը պետք է կասեցնել մինչև ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ/4918/05/20 վարչական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածով, 127-րդ հոդվածի 11-րդ մասով, 131-րդ հոդվածով, 132-րդ հոդվածի 2-րդ մասով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

թիվ ՎԴ/1961/05/20 վարչական գործի վարույթն՝ ըստ հայցի Անի Դիլաքյանի ընդդեմ Բյուրեղավանի քաղաքապետարանի՝ 14.10.2019 թվականի «Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին» թիվ 59-Ա որոշումը՝ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 27.82 քմ ընդհանուր մակերեսով 32 բնակարանը (Վկայական թիվ 15072014-07-0048, տրված 2014 թվականի հուլիսի 15-ին) աճուրդային (դասական) կարգով օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը համաձայնություն տալու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, կասեցնել՝ մինչև թիվ ՎԴ/4918/05/20 վարչական գործով վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալուց 5 օր հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ մինչև ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

ԴԱՏԱՎՈՐ ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ